

## Արձանագրություն №3/2019-2020

Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ 2019թ. սեպտեմբերի 24-ին տեղի ունեցած արտահերթ նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 74-ը (յոթանասունչորս):  
Նիստը նախագահում էր ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը:

Ռեկտորի ժ/պ Գ. Գ. Գևորգյանը, բացելով գիտական խորհրդի արտահերթ նիստը, նշեց գիտխորհրդի 31 անդամի պահանջով արտահերթ նիստ հրավիրելու պահանջի մասին, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. ԵՊՀ գործունեության կարևորագույն հարցերի առնչությամբ որոշումների ընդունման գործընթացում ԵՊՀ գիտական խորհրդի գործուն մասնակցության ապահովման խնդրի քննարկում և համապատասխան հայտարարության ընդունում:
2. ԵՊՀ 100-ամյա հոբելյանին նվիրված իջոցառումների ծրագրի իրագործման ընթացքի մասին:

Մինչ օրակարգի քվեարկությունը, ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի վարիչ Վահե Հովհաննիսյանը նշեց, որ օրակարգի հաստատումը դիտարկվում է իրավական և բարոյաէթիկական տեսանկյունից: ԵՊՀ-ում առկա է գիտական խորհրդի նիստ հրավիրելու 2 ռեժիմ՝ հերթական և արտահերթ: Նրա խոսքերով՝ արտահերթ նիստի պահանջով և առկա օրակարգով հանդես է եկել գիտխորհրդի անդամների 1/3-ը, և եթե օրակարգը հաստատելու հարցը դրվում է քվեարկության, ապա իրավական տեսանկյունից ի հայտ է գալիս կոլիզիա:

Վ. Հովհաննիսյանը նշեց, որ հարցը կարևոր է նաև բարոյաէթիկական տեսանկյունից և ճիշտ չհամարեց գիտխորհրդի անդամների արտահերթ նիստ հրավիրելու պահանջով առաջարկված օրակարգի հաստատման համար քվեարկության կազմակերպումը: Ըստ նրա՝ եթե առկա են խնդիրներ, ապա պետք է առաջ գնալ դրանց քննարկման ճանապարհով: Վերջինս առաջարկեց օրակարգը հաստատելու հարցը քվեարկության դնելու փոխարեն դրա մեջ ներառվող հարցերը տեղափոխել հաջորդ՝ հերթական նիստի օրակարգի մեջ՝ նկատի առնելով ընթացիկ շաբաթ ԵՊՀ հիմնադրման 100-ամյակին նվիրված միջոցառումների ընթացքը:

Գիտխորհրդի ուսանող անդամ, ուսանողական խորհրդի փոխնախագահ Դավիթ Մաթևոսյանը շնորհակալություն հայտնեցելով նախաձեռնությանը միացած անդամներին՝ կարևորեց ԵՊՀ-ում ուսանողների կողմից գիտխորհրդի նիստ հրավիրելու հանգամանքը և գիտխորհրդի մի շարք այլ անդամների կողմից նախաձեռնությանը միանալու հանգամանքը: Նա նշեց, որ զ ի խավ որ մտահոգությունը կապված է ԵՊՀ գիտական խորհրդի դերի հետ: Ըստ նրա՝ վերջին ամիսներին գիտխորհրդի որոշումները առնվազն երկու անգամ անտեսվել են ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի կողմից: Դ. Մաթևոսյանի պնդմամբ՝ առաջին հարցը վերաբերում է ԵՊՀ կառուցվածքային փոփոխություններին, երբ գիտխորհրդի ներկայացրած առաջարկությունը ձևափոխվել էր Հոգաբարձուների խորհրդի կողմից, այսինքն անտեսվել է գիտական խորհրդի տեսակետը: Երկրորդ հարցը վերաբերում է Բյուրականի ուսումնաարտադրական բազայի օտարմանը: Ըստ նրա՝ գիտական խորհուրդը բացասական եզրակացություն էր տվել, սակայն

Հոգաբարձուների խորհրդի նախագահի առաջարկությամբ և փաստարկներով այդ հարցը նորից դրվել է քննարկման: Դ. Մաթևոսյանը նշեց, որ գիտական խորհուրդը, գիտական խորհրդի տեսակետը պետք է ունենա կարևոր ու առանձնահատուկ նշանակություն և այս քննարկումը կապված է բացառապես այդ խնդրի հետ: Ի պատասխան ելույթի՝ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար Գ. Գևորգյանը փաստեց, որ Դավիթ Մաթևոսյանի ելույթում առկա է ապատեղեկատվություն. Ըստ նրա՝ վերջին երկու ամսում չի անցկացվել ո՛չ գիտխորհրդի և ոչ Հոգաբարձուների խորհրդի նիստ: Բացի այդ՝ Բյուրականի ուսումնաարտադրական բազան ոչ միայն չի վաճառվում, այլև իր կողմից նախաձեռնվել է մասնաշենքերից մեկի վերանորոգում: Նա նշեց, որ այդ մասին արդեն հայտարարվել է՝ կոչ անելով տուրք չտալ ապատեղեկատվությանը:

Օրակարգը հաստատել-չհաստատելու շուրջ ընթացող քննարկման կապակցությամբ Գ.Գևորգյանը նկատեց, որ հերթական և արտահերթ նիստեր հրավիրելու դեպքում օրակարգը դրվում է քվեարկությամբ հաստատման:

Գիտխորհրդի ուսանող անդամ Տաթևիկ Սողոյանն իր ելույթում նշեց, որ օրակարգային հարցը քննարկում կազմակերպելն է: Նար խոսքերով՝ արտահերթ նիստ հրավիրելու պահանջով դիմում ստորագրած գիտխորհրդի անդամներից 31-ը կարծում են, որ բուհում առկա է օրակարգային հարց, մնացյալ անդամները ծանուցվել են այդ մասին և եկել են ասելու, թե իբր ոչինչ չունեն քննարկելու, և եթե բուհի հիմնական մարմինը քննարկման վերաբերյալ օրակարգը չհաստատի, կստացվի, որ քննարկելու ոչինչ չկա: Կա ստեղծված իրավիճակ, որը, գիտխորհրդի անդամների 1/3-ը խնդրահարույց է համարում, և խորհրդի մեծամասնությունը ներկա է հասկանալու, թե ինչն է խնդիրը:

**Արտահերթ նիստի օրակարգը դրվեց քվեարկության և գիտխորհրդի անդամների բաց քվեարկությամբ այն մերժվեց:**

Գիտական խորհրդի նախագահ՝

Գ. Գ. Գևորգյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Լ. Ս. Հովսեփյան

03.10.2019թ.